

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

----- 2017 ԹՎԱԿԱՆԻ N -----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
22-Ի N 324-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բարձրագույն և հետրուիական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության նախատեսած՝ սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրեր աշխատելու նպատակով գործուղվող և պայմանագրային պարտավորությունը չկատարող բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների կողմից ուսման ծախսերի փոխհատուցման կարգը, չափը, ժամկետները և սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում հաշվառված Հայաստանի Հանրապետության քաղաքացու և բարձրագույն կրթություն իրականացնող ուսումնական հաստատության ղեկավարի միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին» N 324-Ն որոշման՝

1) վերնագրում և 1-ին կետի 2-րդ ենթակետում «սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում հաշվառված Հայաստանի Հանրապետության քաղաքացու և» բառերը փոխարինել «նպատակային ուսուցմամբ ուսանողի ու» բառերով.

2) N 1 հավելվածի՝

ա. 2-րդ կետում «Բուհ ընդունված սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում հաշվառված և վերջին ութ տարում մշտապես այդտեղ բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացու» բառերը փոխարինել «նպատակային ուսուցմամբ ուսանողի» բառերով.

բ. 3-րդ և 4-րդ կետերում «5 տարի» բառերը փոխարինել «առնվազն երեք տարի» բառերով.

3) N 2 հավելվածի՝

ա. վերնագրում <<Սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում հաշվառված և վերջին ութ տարում մշտապես այդտեղ բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացու>> բառերը փոխարինել <<նպատակային ուսուցմամբ ուսանողի>> բառերով.

բ. նախաբանում «սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում հաշվառված Հայաստանի Հանրապետության քաղաքացին» բառերը փոխարինել « նպատակային ուսուցմամբ ուսանողը » բառերով.

գ. 2.1-րդ կետում «բուհ ընդունված սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում հաշվառված և վերջին ութ տարում մշտապես այդտեղ բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն» բառերը փոխարինել «սովորողին» բառով.

դ. 3.3-րդ կետի «գ» և «է» ենթակետերում <<5 տարի>> բառերը փոխարինել <<առնվազն երեք տարի>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի
N 324-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

«Հ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի
N 324-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բխում է
2016 թվականի փետրվարի 3-ի ««Բարձրագույն և հետբուհական մասնագիտական
կրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի փետրվարի 3-ի ՀՕ-26-Ն
օրենքի ընդունումից:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

««Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին»»
Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքի
/այսուհետ՝ Օրենք/ 5-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում էր, որ պետությունը
սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերում հաշվառված և վերջին ութ
տարում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների
համար երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական
հաստատություններում մրցութային կարգով՝ անվճար բարձրագույն կրթություն
ստանալու իրավունք:

Նույն Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ««Սահմանամերձ կամ
բարձրլեռնային բնակավայրերի ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր
ամրագրվում է նաև հետևյալ պայմանը. ուսանողը ավարտելուց հետո առնվազն 5
տարի ժամկետով գործուղվում է աշխատելու Հայաստանի Հանրապետության
կառավարության նախատեսած բնակավայրերում: Այս պայմանը չկատարելու
դեպքում շրջանավարտը պարտավոր է փոխհատուցել իր ուսման ծախսերը:

Փոխհատուցման կարգը, չափը և ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»>»:

<<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2016 թվականի փետրվարի 3-ի ՀՕ-26-Ն օրենքով սահմանվել է <<**նպատակային ուսուցում**>> հասկացությունը, ինչպես նաև ամրագրվել է, որ նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր նշվում է նաև հետևյալ պայմանը. ուսանողը ավարտելուց հետո՝ **առնվազն 3 տարի ժամկետով**, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գործուղվում է աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրերում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 324-Ն որոշմամբ կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության նախատեսած՝ սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրեր աշխատելու նպատակով գործուղվող և պայմանագրային պարտավորությունը չկատարող բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների կողմից ուսման ծախսերի փոխհատուցման կարգի, չափի և ժամկետների հետ կապված հարաբերությունները, որտեղ ամրագրված են ավարտելուց հետո առնվազն 5 տարի ժամկետով աշխատելու, նպատակային տեղում սովորելու համար բարձրլեռնային բնակավայրերում հաշվառված և վերջին ութ տարում մշտապես բնակվելու պայմանները:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար ՀՀ կառավարության որոշմամբ Հայաստանի Հանրապետության բուհերին հատկացվում են նպատակային ուսուցմամբ տեղեր՝ հատկապես մանկավարժական և ագրարային մասնագիտություններով: Սույն թվականին ՀՀ կառավարության ապրիլի 20-ի N 434-Ն որոշմամբ հաստատվել են <<2017/2018 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերը>>, որի համաձայն նպատակային ուսուցման համար հատկացվել է **41** տեղ:

3.Ակնկալվող արդյունքը

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 324-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ կարգի դրույթները կհամապատասխանեցվեն Օրենքի պահանջներին:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 324-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 324-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն նախատեսվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 324-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ֆինանսների, ՀՀ առողջապահության, ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունների կողմից արված դիտողությունների և առաջարկությունների

N	Նախարարության անվանումը	Դիտողություններ և առաջարկություններ	Նշումներ կատարման վերաբերյալ
1.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Դիտողություններ չկան:	
2.	ՀՀ արդարադատության նախարարություն	Նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետում, 1-ին կետի 2-րդ ենթակետի ա) պարբերությունում, 3-րդ ենթակետի ա) և բ) պարբերություններում <նպատակային ուսուցմամբ սովորող> բառերն անհրաժեշտ է փոխարինել <նպատակային ուսուցմամբ ուսանող> բառերով՝ համապատասխան հղվածներով՝ հաշվի առնելով <Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:	Ընդունված է:
3.	ՀՀ ֆինանսների նախարարություն	Դիտողություններ չկան:	
4.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	Դիտողություններ չկան:	
5.	ՀՀ բնապահպանության նախարարություն	Դիտողություններ չկան:	

<p>6.</p>	<p>« առողջապահության նախարարություն</p>	<p>Ի պատասխան, Ձեր 19.07.2017թ.թիվ 01/10/9554-17 գրության՝ «« կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 324-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»» « կառավարության որոշման նախագծի վերաբերյալ, տեղեկացնում եմ, որ « առողջապահության նախարարությունը սկսած 2011 թ. իրականացնում է նպատակային կլինիկական օրդինատուրայի ծրագիր, սկզբում ինքնուրույնաբար « ԱՆ «Ակադեմիկոս Ս.Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության միջոցով, իսկ 2013 թվականից՝ « կրթության և գիտության նախարարության հետ համատեղ: Նախորդ տարիների ծրագրի իրականացման փորձը ցույց է տալիս, որ « կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի « կառավարության նախատեսած՝ սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրեր աշխատելու նպատակով գործուղվող և պայմանագրային պարտավորությունը չկատարող բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների կողմից ուսման ծախսերի փոխհատուցման կարգը, չափը, ժամկետները և սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերում հաշվառված « քաղաքացու և բարձրագույն կրթություն իրականացնող ուսումնական հաստատության ղեկավարի միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին»»</p>	<p>« կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 324-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բխում է 2016 թվականի փետրվարի 3-ի ««Բարձրագույն և հետբու-հական մասնագիտական կրթության մասին» « օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»» « 2016 թվականի փետրվարի 3-ի ՀՕ-26-Ն օրենքի ընդունումից:</p> <p>Առաջարկությունը լրացուցիչ քննարկման կարիք ունի:</p>
-----------	---	---	---

		<p>թիվ 324-Ն որոշումը և նրանում ներկայացվող փոփոխությունները բժշկական նպատակային կրթության վրա տարածելու դեպքում կառաջանան մի շարք լուրջ խնդիրներ կապված բժշկական կրթության առանձնահատկությունների հետ, մասնավորապես բուհական և պարտադիր հետբուհական կրթության պահանջի, ինչպես նաև ոչ բոլոր սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերում բժշկական կազմակերպությունների առկայության և նպատակային կլինիկական օրդինատուրային դիմողների հանդեպ բնակության վայրի որոշակի պահանջ սահմանելու ոչ նպատակահարմարության հետ:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում եմ սույն որոշմամբ սահմանել, որ սույն որոշումը չի տարածվում բժշկական նպատակային կրթական ծրագրերի վրա և բժշկական նպատակային կրթական ծրագրերի իրականացումը, նպատակային կրթական ծրագրերի շրջանավարտների հետ կնքվող պայմանագրերի օրինակելի ձևը, պայմանագրի դրույթները չկատարելու դեպքում պատասխանատվության ձևը և փոխհատուցման չափը կանոնակարգել ՀՀ կառավարության առանձին որոշմամբ, որը մշակելու համար առաջարկում եմ ստեղծել համատեղ աշխատանքային խումբ:</p> <p>Այնուամենայնիվ, ելնելով նպատակային կրթական ծրագրերի իրականացման, շրջանավարտներին աշխատանքի գործուղելու և նրանց կողմից կատարած աշխատանքը վերահսկելու մեր կուտակած փորձից տեղեկացնում եմ, որ 2015 թվականի հունվարի 22-ի</p>	
--	--	--	--

		<p><<<< կառավարության նախատեսած՝ սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրեր աշխատելու նպատակով գործուղվող և պայմանագրային պարտավորությունը չկատարող բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների կողմից ուսման ծախսերի փոխհատուցման կարգը, չափը, ժամկետները և սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերում հաշվառված ՀՀ քաղաքացու և բարձրագույն կրթություն իրականացնող ուսումնական հաստատության ղեկավարի միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին>>թիվ 324-Ն որոշման ներկայիս և առաջարկվող խմբագրություններով չի պարզաբանվում, թե ով է կրում պատասխանատվություն այն դեպքում, երբ նպատակային կրթական ծրագրերի շրջանավարտը ուսումնառության ավարտից հետո, մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 20-ը չի կարողանում աշխատանքի ընդունման հրամաններ կայացնել, քանի որ տվյալ բնակավայրում հնարավոր գործատուն չունի թափուր հաստիքներ և չի կարող առաջարկել աշխատանք: Սույն կարգի հավելված 1-ով ամրագրվում է միայն շրջանավարտի պատասխանատվությունը:</p>	
--	--	--	--

		<p>Անհասկանալի է նաև նպատակային կրթական ծրագրերով սովորող դառնալու համար սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերում հաշվառված բնակիչ լինելու պահանջը: Ինչու՞ սահմանափակել այդպիսի բնակավայրերի բնակիչ չհանդիսացող այն քաղաքացիների իրավունքները, ովքեր կհամաձայնվեն ուսումն ավարտելուց հետո մեկնել և աշխատել սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերում:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը, ելնելով նպատակային կրթական ծրագրերի իրականացման, շրջանավարտներին աշխատանքի գործուղելու և նրանց կողմից կատարած աշխատանքը վերահսկելու մեր կուտակած փորձից, առաջարկում եմ ի թիվս ներկայացված փոփոխությունների, որոշման հավելված 1-ով ամրագրել գործատուի պատասխանատվությունը բոլոր այն դեպքերում, երբ ինքը չի կարողանա առաջարկել համապատասխան աշխատանք շրջանավարտին, ինչպես նաև վերացնել ծրագրի շահառու հանդիսանալու համար սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրի գրանցված բնակիչ լինելու պարտադիր սահմանված պահանջը:</p>	
--	--	---	--